



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2022

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹԷ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս լիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 7

ԱՂԹՔ ԱՐԴԱՐ ԴԱՏԱԻՈՐԻՆ

Տէր, Աստուածս, յոյսս Քու վրադ դրած եմ.
 փրկէ եւ ազատէ զիս բոլոր հալածիչներէս.
 ջրլայ որ առիծի պէս իմ անձս գիշարեն,
 բզկարեն զիս եւ ազատող մը չունենամ:
 Տէր, Աստուածս, եթէ յանցանք մը գործեցի,
 կամ ձեռքերուս մէջ անիրաւութիւն կայ,
 եթէ ինձի բարիք ընողին չարիք հասցուցի,
 կամ զրկեցի առանց պարճառի ինձի թշնամացողը,
 թող թշնամին վրաս յարձակի եւ հալածէ իմ անձս,
 թող զգեարնէ ու խորտակէ իմ կեանքս,
 եւ իմ փառքս փոշիի վերածէ:
 Ել, ով Տէր, բարկութեամբդ ցցուէ նեղիչներու կարաղութեան դէմ.
 արթնցիր, ով իմ Աստուածս, դուն՝ որ իրաւունքը կը հաստատես:
 Ժողովուրդները մեծ բազմութեամբ թող քու շուրջդ խմբուին,
 եւ դուն՝ քու բարձրութենէդ փրկէ անոնց վրայ:
 Դուն՝ որ կը դարես ժողովուրդները, ով Տէր,
 դարէ զիս, որ արդար եմ եւ անմեղ:
 Թող վերջ գրնէ ամբարիշտներու չարութիւնը,
 եւ դուն արդարը հաստատէ. որովհետեւ դուն, արդար Աստուած,
 կը քննես մարդոց մտածումներն ու ցանկութիւնները:
 Իմ պաշտպան վահանս Աստուած է,
 որ կը փրկէ սրտով ուղիղ մարդիկը.
 Աստուած արդար դարաւոր է,
 եւ ամէն օր կ'արտայայտէ իր գայրոյթը անարդարութեան դէմ:
 Չզղջացող մարդուն ցոյց կու տայ իր սրտած սուրը,
 իր աղեղը, որ կազմեր ու լարեր է,
 մահուան գործիքները, որ պարտասպեր է անոր համար,
 եւ կրակոտ նետերը, որ շիներ է անոր համար:
 Ահա ամբարիշտը անօրէնութիւն կ'երկնէ,
 չարութիւն կը յղանայ եւ սպտութիւն կը ծնի.
 հոր կը փորէ եւ կը խորացնէ, բայց իր բացած փոսին մէջ ինք պիտի իյնայ:
 Անոր նիւթած չարիքը իր գլխուն պիտի գայ,
 անոր անիրաւութիւնը իր գագաթին պիտի իջնէ:
 Ես գոհութիւն պիտի մտաւորանեմ Տիրոջ՝ իր արդարութեան համար,
 ներքող պիտի երգեմ Բարձրեալ Տիրոջ անունին:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՍԱՂՄՈՍ 7



7րդ Սաղմոսը եւս մաս կը կազմէ ողբեր եւ օգնութեան կանչեր դասակարգին: Ինչպէս անցնող Սաղմոսներու պարագային, հոս եւս Դաւիթ ինք օգնութեան կանչ, աղաղակ կը ներկայացնէ Աստուծոյ: Առաջին իսկ բառերը յարակօրէն ցոյց կու փան, որ Դաւիթի միակ յոյսը Աստուած է: Ամբողջական վարահոյծիւնը դրած Աստուծոյ վրայ: Առաջին երկու համարները կը ներկայացնեն հալածանքի վիճակ մը, որուն մէջէն կ'անցնի Դաւիթ: Այս պարագային Դաւիթի հալածիչները մէկ կամ երկու հոգիներ չեն, այլ՝ բազում: Երկրորդ, այդ հալածիչները կը նմանցնէ առիւծի, որ երբեք ալ չեն խնայեր ու պիտի չխնայեն, այլ ընդհակառակը պարտասպ են գիշարելու, բզկարելու: Ահա այս կացութեան մէջ է, որ ամբողջական վարահոյծեամբ Աստուծոյ կը դիմէ օգնութեան համար: «Երեսօրս, կը փեսնէ, որ եթէ Աստուած կը թոյլարէ, որ նեղութիւնները գան, ապա այդ առիթը կ'օգտագործէ մեզ արթնցնելու, այլապէս մարդը ենթակայ է թմբելու, քննալու: Ահա այդ նեղութիւններ ու հալածանքներն են, որ առիթ կու փան Դաւիթի որ Աստուծոյ օգնութիւնը խնդրէ:

3-5 համարները Դաւիթ խոստովանութիւն է որ կ'ընէ. «Եթէ յանցանք գործեր է, ձեռքերուն մէջ անօրէնութիւն կայ»: Դաւիթ ոչ թէ ինքզինք անմեղ կը ներկայացնէ, այլ կ'ուզէ իմանալ, թէ որքանով արդար է եղածը իր հասցէին, այն բանին համար, որ զինք կը գրաւարտեն, եւ հարց կու փայ, եթէ այդ յանցանքին մէջն է, ապա ինք պարտասպ է արդար հապուցման: Դաւիթ գիտէ, թէ որքան իր թշնամիները պարտասպ են զինք հռչարելու, ինչպէս յիշեց սկիզբին, որ առիւծի պէս են, պարտասպ են պարարելու զինք, բայց նաեւ ան ունի վարահոյծիւնը, որ արդար է, ոչ որպէս կարարեալ արդար, այլ այնքան որքան այս պարագային:

Ահա այդ վարահոյծեամբ ալ կը դիմէ Աստուծոյ ըսելով. «Ել ով Տէր, բարկութեամբ ցցուէ նեղիչներուս կարաղութեան դէմ: Արթնցիր, ով իմ Աստուածս, դուն՝ որ իրաւունքը կը հասարարես» 6 հմր: Այս արարայարութեամբ Դաւիթ ցոյց կու փայ, որ Աստուած անբարբեր չէ անիրաւութեան, ամբարշտութեան, անօրէնութեան, այլ՝ բարկութեամբ կրնայ հարուցել, մանաւանդ՝ որ Ան Արդար է ու իրաւունքը կը հասարարէ: Իսկ Դաւիթ միայն իրեն համար չէ որ կ'աղօթէ, այլ նաեւ ամբողջ համայնքին՝ ժողովուրդին 7 հմր:

8-9 հմր: Այնպէս ինչպէս ժողովուրդները կը դարբեն, այնպէս ալ զիս դարբէ կ'ընէ Դաւիթ: Դարբէ իմ արդարութեանս եւ անմեղութեանս համաձայն: Մա չի նշանակեր որ ինք անմեղ է, այլ՝ կը խնդրէ Աստուծմէ, որ այդ դարբաստանը ըլլայ այնքան որքան արդար ու անմեղ է, ոչ աւելին: Դաւիթի միակ փափաքը ամբարշտութեան ու չարութեան վերջ դրուիլն է, եւ արդարութեան հասարարումը ոչ միայն իրեն համար, այլ համայն աշխարհին: Այնպէս ինչպէս Տէր ողորմեա աղօթքով մնայուն խնդրանք կը ներկայացնենք Աստուծոյ, ոչ միայն մեր խաղաղութեան համար, այլ համայն աշխարհին ըսելով. «Տուր աշխարհիս խաղաղութիւն»:

10 հմրով Դաւիթ անգամ կը խոստովանի ըսելով. «Իմ պաշտպան վահանս Աստուած է, որ կը փրկէ սրբով ուղիղ մարդիկը»: Նախ Դաւիթ կը վարահի Աստուծոյ պաշտպանութեան, երկրորդ՝ եթէ ինք սրբով ուղիղ գրնուեցաւ Աստուծոյ դիմաց, ապա, ուրեմն Աստուած ալ զինք պիտի փրկէ: Ահա թէ ինչու Աստուծմէ խնդրեց, որ զինք դարբէ այնքան որքան ինք արդար է ու անմեղ: Յաջորդ խոստովանութիւնը Աստուած նաեւ արդար դարաւոր է, եւ Իր արդար գայրոյթը կ'արարայարէ անարդարութեան դէմ: Իսկ այս պարագային ով է անարդարը, չղջացող մարդը: Խորքին մէջ, ինչպէս պիտի ըսէ Աստուածաշունչը, բոլորը մեղքի փակ են, բայց երբ կայ գոյնմի փրամադրութիւնը, ապա Աստուած պարտասպ է փրկելու, այլապէս սրուած սուր կայ, աղեղ, մահուան գործիքներ, որոնք պարտասպուած են չղջացող մարդոց համար: Այո, որքան ալ կայ Աստուծոյ գութը, ողորմութիւնը, սէրը, բայց նաեւ կայ Անոր արդարութիւնը: Ան երբեք պիտի չանարեւէ անիրաւութիւնը, այլ իւրաքանչիւրին գործերուն համաձայն հարուցելու: Աստուած պարտասպ է դարբելու չարն ու չարութիւնը, որուն համար ալ արդէն պարտասպ է սրուած սուրը, բայց եթէ կ'ուշացնէ, ոչ թէ անբարբեր է, այլ ապաշխարութեան առիթ է որ կու փայ մեղաւորին, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «Աստուծոյ համբերարարութիւնը փրկութիւն համարեցէք»:

14-16 հմրներով Դաւիթ կը ներկայացնէ թէ ինչպէս ամբարիշտը անօրէնութիւն կը մտածէ, այդ մտածումով չարութիւնը կը յղանայ, որմէ նաեւ ստութիւն կը ծնի: Ամբարիշտը ինչ որ ալ ընէ, աւարտին իրեն է որ պիտի վերադառնայ իր ըրածը: Այս մէկը Աստուծոյ արդար գործունէութեան մէկ փարբերակն է: Յաճախ կը կարծենք, որ չարը իր գործերով յաջողութիւն կը գտնէ, բայց աւարտին այդպէս չէ, այլ այն փոսը որ կը փորէ, այդ նոյն փոսին մէջ ինքն է իյնալու: Ի վերջոյ, Դաւիթ կ'աւարտէ իր աղօթք խնդրանքը փառք եւ գոհութիւն փալով Աստուծոյ Իր արդարութեանը համար:

ՆԱՐԱԿԱՆ - ԱՂՈՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն էս նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս: